Հաստատված է

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի

2022 թ. հուլիսի **02**-ի նիստի թիվ **61/19** որոշմամբ

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ՝ Ա. Հ. Մակարյան

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏՆՕՐԵՆՈՒԹՅԱՆ (նոր խմբագրություն)

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետև՝ ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) տնօրենության (այսուհետև՝ տնօրենության) ձևավորման ու գործունեության կարգը, կարգավիճակը, իրավասությունները, տնօրենության նիստերի նախապատրաստման և անցկացման կարգն ու պայմանները:

1.2. Սույն կանոնակարգը մշակվել է ԵՊՀ ռեկտորատի կանոնակարգի և ԵՊՀ ԻՄ կանոնադրության 32-րդ կետի հիման վրա:

2. Տնօրենության կարգավիճակը և իրավասությունները

2.1. ԵՊՀ ԻՄ տնօրենությունը տնօրենին առընթեր խորհրդակցական մարմին է, որը գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում քննարկում է Մասնաճյուղի գործունեության ոլորտներին վերաբերող հարցեր և տնօրենին է ներկայացնում խորհրդատվական բնույթի առաջարկություններ:

2.2. Տնօրենությունը՝

2.2.1. քննարկում, պարզաբանում և կազմակերպում է ԵՊՀ վերադաս մարմինների և ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի որոշումների իրականացման եղանակները և միջոցները, վերահսկում է դրանց կատարման ընթացքը,

2.2.2. քննարկում, մշակում և նախապատրաստում է ԵՊՀ վերադաս մարմինների և ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի քննարկմանը ներկայացվող նյութերը,

2.2.3. քննարկում է ԵՊՀ ԻՄ ուսանողների ազատման (հեռացման), ուսումնառության դադարեցման, ուսանողական իրավունքների վերականգնման, ուսանողական նպաստների ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցման հարցերը,

2.2.4. քննարկում է ԵՊՀ ԻՄ աշխատողների և սովորողների համար առողջապահական, սոցիալական, մշակութային ծրագրերի իրականացմանն առնչվող հարցերը,

2.2.5. քննարկում է ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագրի իրականացման ընթացիկ գործողությունների և միջոցառումների արդյունավետության գնահատման վերաբերյալ հարցերը,

2.2.6. քննարկում է ԵՊՀ ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների արդյունավետ կազմակերպման վերաբերյալ հարցերը,

2.2.7. տնօրենի ներկայացմամբ՝ քննարկում է մասնաճյուղի գործունեությանը վերաբերող այլ հարցեր,

2.2.8. հաշվետու է համալսարանի ռեկտորի, վերադաս խորհուրդների առջև՝ սահմանված կարգով տնօրենի կողմից տրվող հաշվետվությունների ձևով:

2.3. Տնօրենության քննարկումները հաշվի են առնվում տնօրենի որոշումները կայացնելիս, որոնք ձևակերպվում են հրամանով:

3. Տնօրենության կազմը

3.1. Տնօրենության կազմում ընդգրկվում են տնօրենը, փոխտնօրենը, մասնաճյուղի գիտական քարտուղարը, անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի վարիչը, ֆակուլտետների դեկանները, արհբյուրոյի նախագահը, վարչությունների պետերը, գիտական և կրթական գործունեություն

իրականացնող ստորաբաժանումների ղեկավարները, տնօրենության քարտուղարը և ուսանողական խորհրդի նախագահը:

3.2. Տնօրենի որոշմամբ տնօրենության կազմում կարող են ընդգրկվել նաև առանձին ստորաբաժանումների ղեկավարներ և ներկայացուցիչներ:

3.3. Տնօրենի որոշմամբ տնօրենության նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով մշտական կամ ժամանակավոր հիմունքներով կարող են հրավիրվել համապատասխան կարգավիճակ և որակավորում ունեցող արտահամալսարանական մասնագետներ:

3.4. Տնօրենության կազմը հաստատվում է տնօրենի հրամանով:

4. Տնօրենության աշխատակարգը

4.1. Տնօրենության նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, տնօրենի կողմից սահմանված ժամկետներում և օրակարգով:

4.2. Տնօրենության նիստերը նախագահում է տնօրենը:

4.3. Տնօրենը, բացելով նիստը, հայտարարում է օրակարգը, սահմանում օրակարգի հարցերի քննարկման ընթացակարգը և հաջորդականությունը:

5. Տնօրենության որոշումները

5.1. Տնօրենությունում որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեակությամբ:

5.2. Տնօրենության որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ և կարող են հիմք հանդիսանալ տնօրենի հրամանների համար:

6. Տնօրենության նիստերի արձանագրումը

6.1. Տնօրենության նիստերը արձանագրում է տնօրենության քարտուղարը:

6.2. Տնօրենության նիստերի արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ամսաթիվը, նիստին ներկա անձանց անվանացանկը, օրակարգը, հարցերի վերաբերյալ ընդունված խորհրդատվական բնույթի առաջարկությունները և այլ տեղեկություններ:

6.3. Տնօրենության նիստերի արձանագրությունները ստորագրում են տնօրենը և տնօրենության քարտուղարը:

7. Կանոնակարգի հաստատումը և նրանում փոփոխությունների իրականացումը

7.1. Տնօրենության կանոնակարգը հաստատում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը:

7.2. Կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել մասնաճյուղի գիտական խորհրդի որոշմամբ.

7.2.1 տնօրենի,

7.2.2 գիտական խորհրդի անդամների,

7.2.3 գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի առաջարկությամբ: